հողուն ունի Սպանիայ, Փորթու-
գալն, և Փրանսիայ։ Հարաւոյ կող-
մանէ ունի Հօլլանդայ. Ֆլանդրայ.
Սուէցիայ, որ Շվիցերի երկիրն
է. Սավօյեայ՝ Իտալիայ՝ և Ալէ-
մանեայ։ Ի Հիւսիսոյ ունի Դա-
նիմարքն՝ Նօրվէջն՝ Շուէթն՝
Լէհն, և Մօսկօվն։ յ'Արեւելեան
կողմանէ ունի Բստամիօլ՝ Բուղ-
դան։ Տրանսիլվանիայ, Վալա-
քիայ, Ղրիմի երկիրն, և Մաջառն։
Ովկիանոս ծովուն Փրանկստան
ունի զայսքան գլխաւոր Կղզիս.
Անգլթէռայ՝ Իսկօտլանդ՝ Իռ-
լանդ՝ Օրկադն՝ և Հեբուդն։
Միջերկրեայ ծովուն ունի՝ Մայ-
իօրկայ՝ Կօրսիկայ՝ Սարդինիայ՝
Սիչիլիայ՝ և Գրիտ կղզին։
Բալթիկ՝ կամ Տանձկու ծովուն
ունի Զէյլանդ՝ Գօթլանդ՝ Օյ-
լանդ՝ Օյսլ՝ Դաղ՝ և Բուղ։
Մին կայսր կայ, որ Բէչուն կու-
նստի։ 7 Թագաւորք կան։
Թագաւորն Ֆրանցու 'ի Փարէզ.
Սպանիու 'ի Մադրիդ. Անգլթէ-
ռու 'ի Լօնդրա. Լէհին 'ի Կրա-
կօվ. կամ 'ի Վարշավ. Փորթու-
գալին